5

| «ՀԱՍՏԱՏՎԱԾ Է» | «ԳՐԱՆՑՎԱԾ Է» |
| --- | --- |
| Բանկի միակ բաժնետիրոջ 20.11.2009թ. թիվ 02 որոշմամբ | ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի «26» դեկտեմբերի 2009թ. թիվ 1/1607Ն որոշմամբ Գրանցման համարը՝ 80 |
| Բանկի խորհրդի նախագահ՝ Կ.Կարապետյան | ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝ Ա. Ջավադյան |

# «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ - ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Երևան- 2009 թվական

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1.** «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը կամ «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ (այսուհետև Բանկ), ստեղծվել է 1998 թվականի հունվարի 14-ի հիմնադիր ժողովի որոշմամբ և հանդիսանում է «Ռոսիյսկի կրեդիտ-Արմենիա Բանկ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

Բանկը համարվում է առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը (կանոնադրական հիմնադրամը), այսուհետ՝ «Կանոնադրական կապիտալ», բաժանված է Բանկի նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

**1.2.** Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է (այսուհետ՝Կանոնադրություն), որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

**1.3.** Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից: Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

**1.4.** Բանկն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, որը հաշվառված է ինքնուրույն հաշվեկշռում: Բանկն ունի իր ֆիրմային անվանմամբ ու ապրանքային նշանով և Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններով կլոր կնիք՝ գրված երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), դրոշմներ, ձևաթղթեր, համարային կնիքներ և համապատասխան կնիքներ Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների համար:

**1.5.** Իր գործունեությունն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով, նորմատիվներով, ներքին կանոնակարգերով, հրահանգներով, մեթոդական ցուցումներով, իրավական այլ ակտերով և Կանոնադրությամբ ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթներով, թեկուզև դրանք Կանոնադրությամբ ամրագրված չեն առանձին նորմերի ձևով, սակայն չեն հակասում օրենսդրության պարտադիր դրույթներին կամ Բանկի կողմից կնքված պայմանագրերին:

**1.6.** Բանկը կարող է ՀՀ օրենսդրության և Կանոնադրությանը համապատասխան, հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

**1.7.** Բանկն իր գործունեությունը համակարգելու, շահերը ներկայացնելու և պաշտպանելու, տեղեկություններ փոխանակելու և այլ խնդիրներ համատեղ լուծելու նպատակով կարող է ստեղծել շահույթ ստանալու նպատակ չհետապնդող բանկային միություններ և ասոցիացիաներ և անդամակցել դրանց:

**1.8.** Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, կնքել պայմանագրեր, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով):

**1.9.** Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը Բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում կանոնադրական կապիտալում իրենց կատարած ներդրման չափով, բայց ոչ պակաս բաժնետոմսերի անվանական արժեքից:

**1.10.** Հայաստանի Հանրապետություն Կառավարությունն ու պետական կառավարման մարմինները և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե վերջիններս այդպիսիք չեն ստանձնել որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր:

**1.11.** Կենտրոնական բանկը և Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, եթե վերջիններս այդպիսիք չեն ստանձնել որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր:

**1.12.** Բանկը և իր հաճախորդները պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե վերջիններս այդպիսիք չեն ստանձնել որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր:

**1.13.** Բանկն ինքնուրույն է իրականացնում իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

**1.14.** Բանկն ինքնուրույնաբար է ընտրում իր գործընկերներին, որոշում ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքները և այլ գործարքների պայմանները՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

**1.15.** Բանկի գտնվելու վայրը (փոստային հասցեն) նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է: Բանկի գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ 0010,Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Միեր Մկրտչյան փողոց 12:

**1.16.** Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

| | |
|---|---|
| հայերեն՝ | **«ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՆԿ -ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» Փակ Բաժնետիրական Ընկերություն** |
| ռուսերեն՝ | **Закрытое Акционерное Общество «АРМЯНО-РОССИЙСКИЙ ЭКСПОРТНО-ИМПОРТНЫЙ БАНК - ГРУППА ГАЗПРОМБАНКА»** |

անգլերեն՝ **Closed Joint-Stock Company «ARMENIAN-RUSSIAN EXPORT-IMPORT BANK - GAZPROMBANK GROUP».**

.

**1.17.** Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ **«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ - ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ**

ռուսերեն՝ **ЗАО «АРЭКСИМБАНК - ГРУППА ГАЗПРОМБАНКА»**

անգլերեն՝ **CJSC «AREXIMBANK - GAZPROMBANK GROUP».**

**1.18.** Բանկի ապրանքային (սպասարկման) նշանն է՝

**1.19.** Բանկի ֆիրմային անվանումը և ապրանքային (սպասարկման) նշանը (լոգոտիպը) պաշտպանված են ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, դրանք գրանցված են ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում(ֆիրմային անվանման գրանցման մասին 11.05.2009թ. տեղեկանքի, 15.05.2009թ. ապրանքային(սպասարկման) նշանի գրանցման թիվ 14130, 14131,14132 վկայագրերի համաձայն):

## 2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1.**Բանկը և իր մասնաճյուղերը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

ա) ընդունել ցպահանջ եւ ժամկետային ավանդներ.

բ) տրամադրել առևտրային եւ սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնելպարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել բանկային երաշխիքներ եւ ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ) բացել եւ վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է) ինվեստիցիոն (ներդրումային) եւ բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ եւ նման այլ գործարքներ.

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ) մատուցել ֆինանսական եւ ինվեստիցիոն խորհրդատվություն.

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն.

ժե) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ:

**2.2.** ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել Կանոնադրությամբ չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ Կանոնադրությամբ նախատեսված գործառնությունների հետ, եթե դրանք թույլատրելը չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակներին և էականորեն չի վտանգում Բանկի ավանդատուների և վարկատուների շահերը:

**2.3.** Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն ՀՀ օրենսդրությամբ թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

**2.4.** Բանկը ֆինանսական, այդ թվում ավանդային, վարկային գործառնություններ կարող է կատարել ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, արտարժույթով:

**2.5.** Որպես արժութային հսկողության գործակալ՝ Բանկն իրավունք ունի հսկողություն իրականացնել իր բանկային ծառայություններից օգտվող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական ու ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի և այլ հաճախորդների կողմից իրականացվող արժութային գործարքների, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին այդ գործարքների համապատասխանության,

լիցենզիաների պայմանների պահպանման նկատմամբ՝ ՀՀ օրենքներով և Կենտրոնական բանկի սահմանած իրավասության շրջանակներում և կարգով:

**2.6.** Բանկը՝ ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ներդրում և կիրառում է փողերի լվացմանը (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու մեխանիզմներ, իրականացնում է իր հաճախորդների, հաճախորդների անունից հանդես եկող երրորդ անձանց նույնականացում (իդենտիֆիկացիա) և տեղեկությունների պահպանում, միջոցներ է ձեռնարկում իր հաճախորդի կամ երրորդ անձի կողմից կասկածելի գործարար հարաբերությունները և գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ:

## 3. ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1.** Բանկը կարող է իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իր կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական գործունեություն):

**3.2.** Բանկին արգելվում է տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր և միաժամանակ այդ անձին տվյալ արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր տրամադրել:

**3.3.** Բանկի և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ: Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը՝ եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով:

**3.4.** Բանկը իր գործունեության այնպիսի կանոններ է սահմանում, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ, Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին.

բ) Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

**3.5.** Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակցող բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը:

**3.6.** Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է արգելանք կամ կալանք դրվել և բռնագանձվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.7.** Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

**3.8.** Բանկը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է լինել մեկ այլ անձի, կամ անձերի մասնակից կամ հիմնադիր:

Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկն իրավունք չունի այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնել, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում 4,99 տոկոս և ավելի մասնակցություն է.

բ) մեկ անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.

գ) բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը:

Սույն կետով սահմանված կարգով Բանկը պետք է ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանա յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում իր մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը, կամ կազմում է 100 տոկոս:

Բանկը սույն կետով սահմանված կարգով այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելիս տվյալ անձանց հաշվեկշիռները միավորում է իր հաշվեկշռում՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով: Սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված գործարքների կամ գործառնությունների համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում եթե՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը Բանկին է անցել Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարած պարտավորությունների դիմաց:

Նման կարգով ձեռք բերված մասնակցությունը Բանկը պետք է օտարի հնարավոր կարճ ժամանակամիջոցում, բայց վեց ամսից ոչ ուշ: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև Բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերից առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով նշված ժամկետը երկարացնել ևս վեց ամսով.

բ) Բանկը մի այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի Բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը:

## 4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**4.1.** Բանկի կանոնադրական կապիտալը (կանոնադրական հիմնադրամը) պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

**4.2.** Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալը հավասար է իր կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարին:

**4.3.** Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է **12.347.278.554 (Տասներկու միլիարդ երեք հարյուր քառասունյոթ միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր հիսունչորս)** Հայաստանի Հանրապետության դրամ, որը ներառում է **237.329 (Երկու հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր քսանինը) հասարակ (սովորական) բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 52.026(Հիսուներկու հազար քսանվեց)** Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

**4.4.** Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը, լրացուցիչ 450.000(Չորս հարյուր հիսուն հազար) հասարակ (սովորական) բաժնետոմսեր թողարկելով, յուրաքանչյուրը՝ 52.026 (Հիսուներկու հազար քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով, կամ բաժնետոմսերի անվանական արժեքը ավելացնելու միջոցով, եթե նախնական տեղաբաշխված բաժնետոմսերը իրացվել և վճարվել են ամբողջությամբ:

**4.5.** Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի և (կամ) փոխկապակցված անձանց մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կգերազանցի համապատասխանաբար 10, 20 տոկոսը, 50 և 75 տոկոսը:

Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առ ոչինչ է:

**4.6.** Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հայտարարություն այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում այդ անձը պարտավոր է ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը: Անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու համար սույն կետով սահմանված կարգով պահանջվում է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի նաև ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն), ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած ձևով այն իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները (այդ թվում` անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

**4.7.** «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով ուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով անուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում`

ա) մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված, այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները.

բ) մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները` տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով.

գ) մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի

իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի մասնակցություն.

դ) մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի կամ չունի մասնակցություն և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, ինչպես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

**4.8.** Անձը կամ նրա հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով չեն կարող Բանկի կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն եթե՝

ա) անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի.

բ) անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

գ) անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի.

դ) անձի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սնանկացմանը.

ե) տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես Բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող բաժնետերի, գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման.

զ) տվյալ գործարքն ուղղված է, կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

է) տվյալ գործարքի հետևանքով բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք ՀՀ բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել Կանոնադրության 2-րդ գլխում սահմանված ֆինանսական գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները.

ը) փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

թ) տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը.

ժ) անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

Սույն կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում Բանկի կանոնադրական կապիտալի քսան տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ձեռք է բերվում սույն կետով սահմանված կարգով:

**4.9.** ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ցանկում առկա օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Սույն կետով սահմանված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ դրա չափից) կարող են ձեռք բերել բացառապես ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

**4.10.** Բանկի բաժնետոմսերի օտարումը երրորդ անձանց կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգով:

**4.11.** Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

**4.12.** Բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացառությամբ սույն կանոնադրության **6.7** կետին համապատասխան՝ Բանկի կողմից իր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելը անհրաժեշտ է Բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, Բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից երկու ամսվա ընթացքում իրացնել դրանք:

**4.13.** Բանկն իրավունք չունի փոխառուին կամ նրա հետ փոխկապակցված անձանց Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով վարկեր կամ այլ փոխառություններ տրամադրել, ինչպես նաև երաշխավորել կամ երաշխիք տալ երրորդ անձից վարկ կամ փոխառություն ստանալու համար: Սույն կետի խախտմամբ կնքված գործարքներն օրենքի ուժով առոչինչ են:

**4.14.** Բանկի կորուստները (վնասները) ծածկելու, ինչպես նաև Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով:

Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Բանկի Խորհրդի որոշմամբ՝ Բանկի շահույթի և այլ միջոցների չբավարարման դեպքում, և այլ նպատակների համար՝ որոնք նշված չեն սույն կետում, օգտագործման ենթակա չէ:

**4.15.** Պահուստային հիմնադրամը ձևավորվում և հատկացումները կատարվում են Բանկի զուտ շահույթից, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Կանոնադրության **4.14.** կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա մասհանումներն այդ հիմնադրամին կատարվում են Բանկի զուտ շահույթի առնվազն 5%-ի չափով:

**4.16.** Օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ,. կարող են ստեղծվել հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման պահուստային և այլ, այդ թվում՝ Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարման հիմնադրամներ:

**4.17.** Բանկի հիմնադրամներին հատկացումների ու դրանց օգտագործման չափն ու կարգը, որոշվում է Բանկի խորհրդի կողմից:

## 5. ԲԱՆԿԻ ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**5.1.** Բանկի կանոնադրական կապիտալի ձևավորմանը՝ բացառապես սեփական միջոցների հաշվին, կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

**5.2.** Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները Բանկի բաժնետեր կարող են լինել օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Բանկի բաժնետեր չեն կարող լինել կուսակցությունները և արհեստակցական միությունները:

**5.3.** Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դեպոզիտարիան:

**5.4.** Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը (հետագայում բաժնետեր) տալիս է միևնույն իրավունքները: Ընդ որում նման տեսակի և ձևի բաժնետոմսի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող ձայնի իրավունք:

**5.5.** Բանկի բաժնետերերն իրավունք ունեն՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ Բանկի գործունեությունից ստացված շահույթի մասը՝ շահութաբաժիններ (դիվիդենտ).

դ) ստանալ Կանոնադրության 11.3 կետով սահմանված՝ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք), այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Բանկի գործունեության այլ փաստաթղթերի հետ.

ե) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը. եթե օրենքներով և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) ժողովներում հանդես գալ առաջարկություններով.

ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավաբանական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման ժամանակ մասնակցել գույքի բաժանմանը և պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո ստանալ մնացած գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը.

ժա) մյուս բաժնետերերի կողմից գնման նախապատվության իրավունքից հրաժարվելու դեպքում օտարել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

ժբ) ունենալ օրենքներով և Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

**5.6.** Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

ա) ժամանակին, լրիվ ծավալով և Կանոնադրությամբ սահմանված կարգով ներդրումներ կատարել Բանկի կանոնադրական կապիտալում.

բ) մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը, այդ թվում բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություններ.

դ) բաժնետերերը կարող են կրել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

**5.7.** Բանկի բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը (դրանց մասը) օտարելու կամ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք:
Բաժնետոմսերի փոխանցումը կատարվում է հետևյալ կերպ`

ա) մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունք, որի ժամկետը սահմանվում է 30 (Երեսուն) օր` սկսած բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից.

բ) Բանկը պարտավոր է բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերը վաճառելու առաջարկությունն ստանալու պահից 3 օրվա ընթացքում դրա մասին ծանուցել մնացած բաժնետերերին` նշելով նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի ավարտը և դրան չպատասխանելու հետևանքները.

գ) եթե բաժնետերերից որևէ մեկը սույն կետում սահմանված ժամկետում չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետոմսերի օտարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**5.8.** Բանկի վաճառվող բաժնետոմսերի գնման նախապատվության իրավունքը մնացած բաժնետերերի կողմից համարվում է կիրառված, իսկ դրա համար սահմանված ժամկետը պահպանված, եթե Բանկի ծանուցումն ստացած բաժնետերերը Բանկին գրավոր տեղեկացնում/ծանուցում են նախապատվության իրավունքով վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման կամ դրանից հրաժարվելու մասին:

**5.9.** Բանկի բաժնետոմսերն իրավահաջորդության կարգով կարող են անցնել Բանկի բաժնետեր քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին` Ընդհանուր ժողովի կողմից ընդունված միաձայն որոշմամբ:

**5.10.** Բանկի Կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**5.11.** Բանկի բաժնետոմսերը կարող են գրավադրվել բացառապես բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ: Ընդ որում, տվյալ հարցի քվեարկության ժամանակ հաշվի չեն առնվում գրավադրվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայները և որոշումն ընդունվում է մնացած բաժնետերերի կողմից քվեարկության արդյունքներով: Առանց Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման Բանկի բաժնետոմսերը գրավադրվելու դեպքում գրավատու հանդիսացող Բանկի բաժնետիրոջ նկատմամբ կարող են կիրառվել ֆինանսական պատժամիջոցներ` տուգանքներ, Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով:

## 6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ, ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ

**6.1.** Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

**6.2.** Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը` խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

**6.3.** Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի` շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բանկի խորհրդի`միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

**6.4.** Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն`

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում` Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում` խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում` Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում` Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

**6.5.** Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

**6.6.** Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ սույն կանոնադրության **6.7** կետում սահմանված դեպքերի:

**6.7.** Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերը (մասնակիցները) իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկից իրենց մասնակցության հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է մասնակիցների իրավունքների՝ սույն կետի առաջին պարբերությամբ նշված սահմանափակմանը:

**6.8.** Բանկի կողմից մասնակցության հետգնումը կատարվում է Կենտրոնական Բանկի խորհրդի համաձայնությամբ, դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

Բանկի կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում:

**6.9.** Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական կապիտալի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

## 7. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**7.1.** Բանկի կառավարման մարմիններն են՝

- բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ընդհանուր ժողով).
- Բանկի խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ).
- Բանկի Գլխավոր տնօրենը:
- Բացի վերոնշյալ կառավարման մարմիններից, Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ և ներքին աուդիտի ստորաբաժանում:

Բանկում վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում:

Բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը և իրավասությունների շրջանակը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ:

### 7.2. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**7.2.1.** Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

**7.2.2.** Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 2-րդ ամսից մինչև 4-րդ ամիսն ընկած ժամանակահատվածում:

**7.2.3.** Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են արտահերթ ժողովներ:

**7.2.4.** Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովների տարեկան և արտահերթ նիստերը գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ: Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ սահմանվում են՝

ա) քվեաթերթիկի ձևն ու բովանդակությունը.

բ) Բանկի բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Բանկի կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

**7.2.5.** Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և սույն կանոնադրությամբ և օրենքներով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:
«Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքը կիրառելիս արտոնյալ բաժնետոմսերի տված ձայների քանակի հաշվարկն իրականացվում է սույն կանոնադրության **7.2.9** կետով սահմանված կարգով:

**7.2.6.** Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:
Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:
Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:
Բանկի բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է սույն կանոնադրության 7.2.11-րդ կետով սահմանված կարգով:
Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

**7.2.7.** Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
բ) Բանկի վերակազմակերպումը.
գ) Բանկի լուծարումը.
դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
զ) հայտարարված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը.
է) խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
թ) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.
ժ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
ժա) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.
ժբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
ժգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
ժդ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.
ժե) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.
ժզ) խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.
ժէ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
ժը) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

**7.2.8.** Սույն կանոնադրության **7.2.7.** կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել բանկի խորհրդին, ինչպես նաև Բանկի գլխավոր տնօրենին, նրա տեղակալներին, Բանկի գլխավոր հաշվապահին (այսուհետ նաև՝ գործադիր մարմնի անդամներ) կամ այլ անձի, բացառությամբ **7.2.7.** կետի **"ժբ-ժգ"** կետերում թվարկված հարցերի և Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման հարցի, որոնցով որոշումների ընդունումը ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել խորհրդին:

**7.2.9.** Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝
ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.
բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում:
Ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմս է համարվում այն հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քվեարկվող հարցի վերաբերյալ քվեարկությանը մասնակցելու իրավունք: Եթե արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք, ապա

քվեարկող բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված արտոնյալ բաժնետոմսերի տրված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է որպես առանձին քվեարկող բաժնետոմս:
Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
Որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ: Ընդ որում՝ Կանոնադրության **7.2.7. կետի ա)բ)դ)զ)** ենթակետերով թվարկված հարցերով և գործարքների կնքման մասին որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, իսկ **7.2.7 կետի գ)** ենթակետով և սույն կանոնադրության **6.7 կետում** սահմանված կանոնադրական կապիտալի նվազեցման հարցերով կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
Եթե Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ: Բաժնետեր իրավաբանական անձի որոշումը պետք է ընդունվի վերջինիս կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

**7.2.10.** Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ Կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

գ) Բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առնչվում է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Բանկն իր բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

2. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

3. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական կապիտալում նրան պատկանող մասնակցության մասին, ըստ՝ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում:

Բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

**7.2.11.** Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը.

1. Սույն կանոնադրության **7.2.10.** կետում սահմանված անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակվում է նաև մամուլի և ինտերնետի Բանկի տնային էջում, ժողովի գումարման օրվանից առնվազն տասնհինգ օր առաջ:

Բաժնետերերի ծանուցումը ժողովի մասին, ինչպես նաև քվեաթերթիկների տրամադրումը սույն կանոնադրության **7.2.10.** կետում նշված անձանց իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ անձամբ հանձնելու, կամ էլեկտրոնային փոստային հասցեով ծանուցելու միջոցով:
2. Ժողովի գումարման մասին բաժնետերերը ծանուցվում են ժողովի գումարման օրվանից առնվազն տասնհինգ օր առաջ:
3. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝
ա) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.
բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
4. Տարեկան ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝
ա) Բանկի տարեկան հաշվետվությունը.
բ) Բանկի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ անկախ աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը.
գ) տեղեկություններ խորհրդի առաջադրվող թեկնածուների մասին (խորհրդի անդամների ընտրության դեպքում).
դ) կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:
Օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել նաև բաժնետերերին՝ ժողովը նախապատրաստելու ընթացքում ներկայացվելիք այլ տեղեկությունների լրացուցիչ ցանկ:
5. Ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները և նյութերը:
6. Եթե Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

**7.2.12.** Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքները իրականացնում է Բանկի խորհուրդը: Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Բանկի խորհուրդը որոշում է՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամը.
- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.
- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելուն իրավունք ունեցող Բաժնետերերի ցուցակի կազման տարին, ամիսը, ամսաթիվը.
- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին Բաժնետերերին ծանուցելու կարգը.
- Բաժնետերերին Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը, քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

**7.2.13.** Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Կանոնադրության **7.2.7 կետի բ) գ) ը)** ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

**7.2.14.** Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

**7.2.15.** Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ժողովի գումարման դեպքում տրամադրված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում ժողովի գումարման ամսաթվին նախորդող աշխատանքային օրը:

**7.2.16** Հեռակա կարգով կատարվող քվեարկության քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
ա) Բանկի ֆիրմային անվանումը.
բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
գ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը.
դ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»: Գումարային (կումուլյատիվ) քվեարկության անցկացման դեպքում քվեաթերթիկը պետք է նախատեսի քվեարկության կարգի առանձնահատկությունները.
ե) լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, եթե բաժնետերը քվեարկում է հեռակա կարգով.
զ) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից.

է) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:
Խորհրդի անդամի ընտրության դեպքում քվեաթերթիկը պետք է թեկնածուների անունից բացի նրանց մասին պարունակի նաև անհատականացնող այլ տվյալներ:

**7.2.17.** Բանկի բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բանկերի և բանկային գործունեության», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը պետք է պարունակի տեղեկություններ բաժնետիրոջ և նրա ներկայացուցչի մասին (անունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը, անձնագրային կամ պետական գրանցման տվյալները): Լիազորագրերը պետք է ձևակերպված լինեն ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում:

Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը:

Բանկի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:

2. Եթե Բանկի բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

**7.2.18.** Բանկի ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում առնվազն երկու օրինակով կազմվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Արձանագրության մեջ նշվում են՝

- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.
- ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.
- ժողովի նախագահը և քարտուղարը, ժողովի օրակարգը:

Արձանագրությունը պետք է բովանդակի ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի կողմից ընդունված որոշումները:

Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ժողովի արձանագրություններին:

## 7.3. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ, ԵՎ ՆՐԱ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ, ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**7.3.1.** Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ «Բանկերի և բանկային գործունեության» ՀՀ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

**7.3.2.** Բանկի խորհուրդը կազմված է 7(Յոթ) անդամից:

**7.3.3.** Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից՝ «Բանկերի և բանկային գործունեության», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Կանոնադրությամբ սահմանված կարգով:

**7.3.4.** Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

**7.3.5.** Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

**7.3.6.** Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.
ա) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.
բ) միավորվող բաժնետերերի կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության» օրենքի 43 հոդվածի հինգերորդ մասով սահմանված տեղեկությունները.
գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.
դ) միավորվող բաժնետերերի հայեցողությամբ՝ այլ պայմաններ: Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

**7.3.7** Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:
Սույն կետի կիրառման առումով Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետեր է համարվում Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության **7.3.6** կետում նշված պայմանագիրը:
Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և կարող է ընդգրկվել խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:
Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնադրության **7.3.6** կետում նշված պայմանագիրը կնքած Բանկի բաժնետերերը:
Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությունը, առաջադրումն ու Բանկի խորհրդում նրանց ընդգրկումը կատարվում է Կանոնադրության **7.2.** գլխում սահմանված կարգով: Ընդ որում, բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի առաջադրած ներկայացուցչի մասին՝ «Բանկերի և բանկային գործունեության» ՀՀ օրենքով պահանջվող տեղեկատվությունը խորհրդի կողմից ներկայացվում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

**7.3.8.** Բանկի խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Բանկի խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

**7.3.9.** Բանկի խորհրդի անդամները վարձատրվում են:
Բանկի խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

**7.3.10.** Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից:
Բանկի խորհրդի նախագահը՝
ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.
գ) կազմակերպում է Ընդհանուր ժողովի և խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
դ) նախագահում է Բանկի Ընդհանուր ժողովում.
ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:
Խորհրդի նախագահը կարող է ունենալ տեղակալ, որն ընտրվում է խորհրդի կողմից, անդամների կազմից: Խորհրդի նախագահի տեղակալը իրականացնում է խորհրդի նախագահի պարտականությունները վերջինիս բացակայության ողջ ժամանակահատվածի ընթացքում: Խորհրդի նախագահը կարող է ունենալ իր աշխատակազմը՝ համապատասխան աշխատատեղերով: Խորհրդի նախագահի աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը կատարվում է Բանկի միջոցների հաշվին:
Բանկի խորհրդի նախագահի հետ աշխատանքային պայմանագիրը Բանկի անունից կնքում է խորհրդի նախագահի տեղակալը:

**7.3.11.** Բանկի խորհրդի իրավասություններն են՝
ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց կողմից անմիջականորեն համակարգվող բնագավառներն ու կառուցվածքային ստորաբաժանումները, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժ) ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) սույն կանոնդրության **7.2.7. կետի «բ», «ժբ-ժգ»** ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ)Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ի) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

2. Սույն կետի առաջին մասում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքի:

Բանկի խորհրդի հաստատած բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում սույն կետի առաջին մասի «զ» կետով սահմանված Բանկի աշխատատեղերի հաստատման իրավասությունը Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի գլխավոր տնօրենին :

**7.3.12.** Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

**7.3.13.** Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

**7.3.14.** Բանկի խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ:

Բանկի խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ անձամբ դրանք հանձնելու, կամ էլեկտրոնային փոստային հասցեով, կամ հեռախոսագրով նրանց ծանուցելու միջոցով:

Բանկի խորհրդի նիստի գումարման մասին Բանկի խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն հինգ օր առաջ:

Նիստի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը (գրավոր ծանուցման դեպքում).

բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.

դ) Բանկի խորհրդի անդամների ծանոթանալու կարգը նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին նիստը նախապատրաստելու ընթացքում:

**7.3.15.** Բանկի խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, բանկի գլխավոր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

**7.3.16.** Բանկի խորհրդի նիստերը գումարվում և անցկացվում է հետևյալ կերպ.

- խորհրդի նիստի քարտուղարը խորհրդի նիստերի գումարման մասին պատշաճ տեղեկացնում է խորհրդի բոլոր անդամներին և Բանկի գլխավոր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին, ինչպես նաև խորհրդի նիստ գումարելու պահանջ ներկայացրած անձանց՝ նշելով խորհրդի նիստի գումարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը և խորհրդի օրակարգը.

- խորհրդի նիստի քարտուղարը խորհրդի նիստն սկսվելուց առնվազն 10 րոպե առաջ գրանցում է խորհրդի նիստին ներկայացած խորհրդի անդամներին և արդյունքների մասին հայտնում է խորհրդի նախագահին կամ նրա տեղակալին.
- խորհրդի նիստին քվորումն ապահովված լինելու և Բանկի գլխավոր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի ներկայության դեպքում սահմանված ժամին խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հայտարարում է խորհրդի նիստը բացված.
- խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամներին, Բանկի գլխավոր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին և մասնակցող անձանց ծանոթացնում է խորհրդի օրակարգի ու դրանում ընդգրկված հարցերի քվեարկությունների ձևերի մասին.
- խորհրդի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի շուրջ խորհրդի անդամները, Բանկի գլխավոր տնօրենը կամ նրա պարտականությունները կատարող անձը ու մասնակցող անձինք արտահայտվելու իրավունք ունեն.
- խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ քննարկումներն ավարտվելուց հետո խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հարցը դնում է քվեարկության.
- խորհրդի նիստի քարտուղարը հաշվառում է ձայները և դրանք տրամադրում կամ քվեարկության արդյունքները հայտնում է խորհրդի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալին, որը հրապարակում է քվեարկության դրված հարցի շուրջ խորհրդի կողմից կայացված որոշումը.
- խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ կայացվելուց հետո խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, խորհրդի նիստին մասնակցած խորհրդի անդամներին տեղեկացնում է խորհրդի նիստի արձանագրությանը ծանոթանալու և ստորագրելու կարգին, որից հետո հայտարարում է խորհրդի նիստը փակված.
- խորհրդի քվորումի, Բանկի գլխավոր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի բացակայության դեպքում խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը հայտարարում է նոր խորհրդի նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, և վայրը:
Գումարված խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստն անցկացնում է Բանկի խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը (այսուհետ՝ նիստի նախագահող), երբ նիստի անցկացման տեղում ներկա են խորհրդի առնվազն երեք անդամներ: Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստը անցկացվում է նիստի անցկացման տեղում տեղադրված հեռախոսի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով (այսուհետ՝ կապի միջոց), որոնցով խորհրդի նիստի անցկացման ժամանակ ապահովվում է խորհրդի նիստի բոլոր մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Խորհրդի նիտի մասնակիցներ են համարվում նիստի նախագահողը, խորհրդի նիստի անցկացման տեղում ներկա գտնվող խորհրդի անդամը (անդամները), խորհրդի նիստի տեղում ներկա չգտնվող և կապի միջոցով խորհրդի նիստի մյուս մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորություն ունեցող խորհրդի անդամը (անդամներ) և (կամ) Բանկի գլխավոր տնօրենը կամ նրա պարտականությունները իրականացնող անձը, ինչպես նաև խորհրդի նիստին հրավիրված անձինք:
Խորհրդի նիստերն իրական ժամանակի ռեժիմում անցկացվում են հետևյալ կարգով.
Նիստի նախագահողը կապի միջոցով կապ է հաստատում նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի նիստի մասնակցի հետ, վերջինիս (վերջիններիս) առաջադրելով ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր (իրենց) դիրքորոշումը:
Խորհրդի նիստի քարտուղարը, խորհրդի անդամի կամ Բանկի գլխավոր տնօրենի կամ նրա պարտականությունները իրականացնող անձի պահանջով արձանագրում է արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները), որոնք ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստորագրության է (են) ներկայացվում խորհրդի նիստի անցկացման սենյակում չգտնվող դիրքորոշում հայտնած խորհրդի անդամին (անդամներին): Ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստացված գրավոր դիրքորոշումը (դիրքորոշումները) խորհրդի անդամը (անդամները) ստորագրում և ֆաքսիմիլային կապի միջոցով հետ է (են) ուղարկում խորհրդի նիստի քարտուղարին: Միաժամանակ կապի միջոցով նիստի մասնակցի (մասնակիցների) արտահայտած դիրքորոշումը (դիրքորոշումները) ձայնագրվում (կամ տեսագրվում) և պահվում է (են)՝ մինչև խորհրդի նիստի արձանագրության ստորագրումը: Խորհրդի նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի անդամի (անդամների) կապի միջոցով արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները) հաշվի է (են) առնվում քվեարկության և ձայների հաշվառման ժամանակ:
**7.3.17** Բանկի խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
**7.3.18.** Խորհրդի նիստերն հեռակա կարգով գումարումն անցկացումը կատարվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով խորհրդի նիստ գումարելու և անցկացնելու դեպքում՝
ա) խորհրդի նիստերի քարտուղարը խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության միջոցով ուղարկում է խորհրդի օրակարգը, քվեաթերթիկները՝ համապատասխան հարցով, քվեարկման տարբերակներով,
բ) խորհրդի անդամները՝ ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով խորհրդի օրակարգին, 3 (երեք) բանկային օրվա ընթացքում քվեաթերթիկների միջոցով քվեարկում են դրանում նշված հարցի շուրջ ու ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով այն ուղարկում են Բանկի խորհրդի նիստի քարտուղարին.

գ) խորհրդի նիստի քարտուղարը ամփոփում է խորհրդի անդամների կողմից կատարված քվեարկության արդյունքները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է խորհրդի նիստի հեռակա կարգով անցկացման արձանագրություն.
դ) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի կազմված արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի անդամներին՝ ստորագրության.
ե) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի ստորագրված արձանագրության հիման վրա խորհրդի նիստի քարտուղարը կազմում է խորհրդի համապատասխան որոշման նախագիծ և այն ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի նախագահին՝ ստորագրության համար, և այն ստորագրված վիճակում ստանալով՝ տրամադրում է Բանկի Գլխավոր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին՝ որոշման պահանջների կատարումն ապահովելու համար:
Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե քվեաթերթիկում թողնվել է մեկ տարբերակ և ուղարկվել է քվեաթերթիկում նշված ժամկետում

**7.3.19.** Սույն կանոնադրության 7.3.11. կետի առաջին մասի «գ», «դ», «ժ» և «ժդ» ենթակետերում նշված, ինչպես նաև բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

**7.3.20.** Բանկի խորհրդի նիստերն իրավասու են (քվորում ունեն) եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:
Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

**7.3.21.** Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ Բանկի գլխավոր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ բանկի գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի գլխավոր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

**7.3.22.** Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
բ) նիստին մասնակցած անձինք.
գ) նիստի օրակարգը.
դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.
ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
զ) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

**7.3.23.** Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:
Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

**7.3.24.** Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման հիմքերը.
1. ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝
ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի խորհրդի անդամ (Բանկի ղեկավար).
գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և Կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.
դ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:
2. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:
Բանկն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն ենթակետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

**7.3.25.** Բանկի Խորհրդի այն անդամի կամ ներկայացուցչի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում, երբ վերջինս ընդգրկված կամ նշանակված է եղել խորհրդի կազմում առանց ընտրության՝

կանոնադրությամբ դրա իրավունքը ունեցող Բանկի բաժնետերերի կողմից, խորհրդի նոր անդամի ընդգրկումը կամ նշանակումը կատարվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում՝առանց ընտրության, նրան առաջադրած բաժնետիրոջ կամ բաժնետերերի խմբի կողմից խորհրդի նախագահին և բաժնետերերին ուղղված ծանուցման հիման վրա:

**7.3.26.** Բանկի Խորհրդի այն անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում, երբ վերջինս ընդգրկված է եղել խորհրդի կազմում ընտրության միջոցով, խորհրդի նոր անդամն ընտրվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում՝քվեարկության միջոցով: Բաժնետերերը քվեարկության ընթացքում իրավունք ունեն ձայները տրամադրել մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջեւ: Խորհրդի կազմում ընտրված է համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուն:

## 7.4. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

**7.4.1.** Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Բանկի գլխավոր տնօրենը նշանակվում է (են) խորհրդի կողմից, գլխավոր տնօրենի տեղակալները՝ խորհրդի կողմից՝ գլխավոր տնօրենի ներկայացմամբ:

**7.4.2.**Բանկի գլխավոր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

**7.4.3.** Բանկի գլխավոր տնօրենը՝

ա) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կանոնակարգերը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններն ու կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև դրանցում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները.

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, հանձնարարականներ և վերահսկում դրանց կատարումը.

գ) Բանկի աշխատակիցների, բացառությամբ Բանկի խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր կամ լիազորում է դրանց մի մասի կնքումը Բանկի այլ ղեկավարներին, ու ՀՀ աշխատանքային օրենսգրքի իմաստով հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ.

դ) լուծում է Բանկի աշխատակիցների, բացառությամբ Բանկի խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքված աշխատանքային պայմանագրերը, կամ լիազորում է դրանց մի մասի լուծումը Բանկի այլ ղեկավարներին.

ե)Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

զ) կատարում է իրավունքների և պարտականությունների բաշխում իր տեղակալների և բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների միջև.

է) ստեղծում է ժամանակավոր հանձնաժողովներ՝ նրանց վրա դնելով կոնկրետ պարտականություններ.

ը) ստեղծում է մշտապես գործող խորհրդակցական մարմիններ՝ հանձնաժողովների ձևով.

թ) իր իրավասության սահմաններում կազմավորում է (կամ) լուծարում է ժամանակավորապես գործող հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ, հաստատում դրանց անհատական կազմը.

ժ) հաստատում է Բանկի կողմից ծառայությունների մատուցման սակագները.

ժա) որոշում է ընդունում Բանկի կողմից նոր ծառայությունների մատուցման վերաբերյալ.

ժբ) սահմանում է Բանկի ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքները՝ ՀՀ գործող օրենսդրության համապատասխան.

ժգ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային և այլ բնույթի հաշվետվություններ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր.

ժդ) սահմանում է Բանկում կատարվող փաստաթղթաշրջանառության և բանկային փաստաթղթերի ձևակերպման կարգը.

ժե) ֆինանսական գործունեության արդյունքներից ելնելով որոշում է ընդունում Բանկի անձնակազմի պարգևատրման վերաբերյալ.

ժզ) ապահովում է ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը.

ժէ) իրականացնում է սույն կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Այն հարցերը, որոնք «Բանկերի և բանկային գործունեության» ՀՀ օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գլխավոր տնօրենի իրավասությանը:

**7.4.4.** Բանկի գլխավոր տնօրենը խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի սահմանած կարգով:

**7.4.5.** Բանկի գլխավոր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի գլխավոր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գլխավոր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս

համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

**7.4.6.** Խորհրդի կողմից Բանկի գլխավոր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի գլխավոր տնօրեն (Բանկի ղեկավար).

գ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Գլխավոր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Ընդ որում, Բանկն իրավունք ունի գլխավոր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն պարբերության առաջին մասում նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով գլխավոր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

**7.4.7.** Գլխավոր տնօրենի բացակայության ժամանակ նրա լիազորությունները և պարտականությունները իրականացնում է իր հրամանով լիազորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի որակավորման և մասնագիտական համապատասխանության դրական եզրակացությունը ստացած, տեղակալներից մեկը:

**7.4.8.** Գլխավոր տնօրենի տեղակալները՝

ա) ղեկավարում են Բանկի՝ իր կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները.

բ) քննության են առնում Բանկի կառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող առաջարկությունները Բանկի՝ իրենց կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանումների եւ դրանց ղեկավարների աշխատանքի կամ պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ և համապատասխան եզրակացություններ ներկայացնում Գլխավոր տնօրենին.

գ) առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր տնօրենին Բանկի՝ իրենց կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների եւ աշխատողների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումներում համապատասխան ղեկավարների պաշտոնի նշանակման եւ պաշտոնից ազատման վերաբերյալ.

դ) Բանկի՝ իրենց կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանումներից ստացած առաջարկությունների հիման վրա կազմում են Բանկի գործունեության և ընդհանուր ֆինանսա-տնտեսական վիճակի մասին համապատասխան մասով հաշվետվություններ, նախապատրաստում Գլխավոր տնօրենի գործունեության ընթացիկ հաշվետվության վերաբերյալ խորհրդին ներկայացվող նյութեր.

ե) առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր տնօրենին՝ իրենց կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ինչպես նաև դրանց ղեկավարների՝ իրենց զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին.

զ) Գլխավոր տնօրենի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, փոխարինում են նրան.

է) Գլխավոր տնօրենի հանձնարարությամբ իրականացնում են այլ լիազորություններ:

## 7.5. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

**7.5.1.** Բանկի գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը (տեքստում՝ գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր աշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

**7.5.2.** Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

**7.5.3.** Բանկի գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Բանկի բոլոր աշխատակիցների համար:

**7.5.4.** Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի գլխավոր տնօրենի ներկայացմամբ: Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գլխավոր տնօրենին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

**7.5.5.** Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և գլխավոր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

**7.5.6.** Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան:

## 7.6. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

**7.6.1.** Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման

մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

**7.6.2.** Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

բ) հսկողություն է իրականացնում Բանկի գլխավոր տնօրենի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, գլխավոր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

**7.6.3.** Բանկի ներքին աուդիտի ղեկավարը խորհրդին և գլխավոր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են գլխավոր տնօրենի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

**7.6.4.** Բանկի ներքին աուդիտի կողմից խախտումները բացահայտելու դեպքում դրանք խորհրդին ներկայացնելու կարգը, դրանց վերացման ուղղությամբ խորհրդի կողմից ձեռնարկվող միջոցառումները.

1. Բանկի ներքին աուդիտն՝ **7.6.3.** կետի բ) ենթակետում նշված գլխավոր տնօրենի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության հետևանքով էական խախտումների բացահայտման դեպքում, պարտավոր է հաշվետվության ձևով դրանք անմիջապես ներկայացնել բանկի խորհրդի նախագահին՝ խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում, միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ.
2. Եթե ներքին աուդիտի կողմից բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական եւ բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման եւ հետագայում չկրկնման ուղղությամբ.
3. Բանկի խորհուրդը երկու աշխատանքային օրվա ընթացքում, իր արտահերթ հրավիրված նիստում լսում է ներքին աուդիտի հաշվետվությունը և դրանում նշված փաստերն հիմնավորվելու դեպքում, կարող է որոշում կայացնել նշված ղեկավարին նկատմամբ նախազգուշացման և խախտումները վերացնելու հանձնարարականի տեսքով պատժամիջոց կիրառելու վերաբերյալ:

Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տված խախտումը եւ խախտում թույլ տված բանկի ղեկավարը տեղեկացվում է խախտման անթույլատրելիության մասին:

Նախազգուշացումը նախատեսում է նաեւ թույլ տված խախտումը խորհրդի կողմից սահմանված ժամկետում վերացնելու եւ (կամ) ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական և (կամ) Բանկի ղեկավարի կողմից կնքվող որոշակի գործարքների, գործառնությունների դադարեցում, դրանց պայմանների փոփոխություն: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի ղեկավարի համար:

4. Բանկի խորհուրդը՝ ներքին աուդիտի հաշվետվության հիման վրա, իրավունք ունի նաև իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու և (կամ) վստահությունը կորցնելու պատճառաբանությամբ լուծելու Բանկի ղեկավարի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը:

**7.6.5.** Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրավունք ունի ստանալու Բանկի խորհրդի նիստի արձանագրությունները:

## 8. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**8.1.** Բանկի ղեկավարներ են համարվում Բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը, նրա տեղակալները, գործադիր մարմնի անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալները, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, ինչպես նաեւ բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ Բանկի դեպարտամենտի, վարչության, բաժնի, ինչպես նաև Կենտրոնական Բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գլխավոր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ Բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

**8.2.** Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.
բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.
գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.
դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական Բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության եւ գործարար համբավի վարկաբեկմանը.
զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

**8.3.** Բանկի գործադիր մարմնի աշխատանքի գնահատման գործառույթը վերապահվում է Բանկի խորհրդին: Բանկի խորհուրդը Բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքը գնահատում է Խորհրդին պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների հիման վրա: Բանկի խորհուրդը Բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքը գնահատում է յուրաքանչյուր եռամսյակ:

Գործադիր մարմնի աշխատանքները գնահատվում են ելնելով գործադիր մարմնի կողմից իրականացվող՝

- Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- Ռիսկերի զսպմանը ուղղված գործառույթներից,
- Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- Տոկոսադրույքների քաղաքականությունից,
- Եկամուտների և ծախսերի արդյունավետ պլանավորումից և իրականացումից,
- Կադրային քաղաքականությունից:

**8.4.** Կենտրոնական բանկի՝ բանկի ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից այդ անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և այլ ներքին փաստաթղթերով տրված լիազորությունները դադարում են:

**8.5.** Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ Բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

**8.6**. Բանկի գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալները, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գլխավոր տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալներ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

**8.7.** Բանկի գործադիր մարմնի անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ:

**8.8.**Բանկի ղեկավարներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Բանկի շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:
Եթե բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

**8.9.** Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

**8.10.** Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի գլխավոր տնօրենը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով պահանջվում է խորհրդի որոշում, ապա խորհրդի անդամները և գլխավոր տնօրենը.

բ) գործադիր մարմնի անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները.

գ) եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ.

դ) եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում Բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա ներքին աուդիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները.

ե) եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով Բանկին

պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի գլխավոր տնօրենը:

**8.11.** Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից: Մասնավորապես՝

ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ.

բ) եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

**8.12.** Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

**8.13.** Բանկը կամ Բանկի այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Բանկի տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում մասնակցության) մեկ եւ ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) Բանկի ղեկավարների դեմ հայցով դիմելու դատարան՝ Բանկին պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

## 9. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**9.1** Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս ստեղծել առանձնացված տարածքային ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ ինչպես նաև հիմնարկներ:

**9.2.** Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների հիմնադրման և նրանց գործունեության դադարեցման մասին որոշումները կայացնում է Բանկի խորհուրդը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

**9.3.** Բանկի մասնաճյուղը բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) Կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

**9.4.** Բանկի ներկայացուցչությունը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստաորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և սույն օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

**9.5.** Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները համարվում են հիմնադրված և իրավունք ունեն իրականացնել իրենց վերապահված գործառնությունները, միայն ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

Բանկի մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները գործում են Բանկի խորհրդի կողմից հաստատած կանոնադրությունների հիման վրա:

**9.6.** Մասնաճյուղերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Բանկի գլխավոր տնօրենը: Մասնաճյուղերի ընթացիկ ղեկավարությունն իրականացնում է մասնաճյուղերի ղեկավարները՝ մասնաճյուղերի կառավարիչները, որոնք ապահովում են մասնաճյուղերում Բանկի կառավարման մարմինների որոշումների, հանձնարարականների և այլ ներքին իրավական ակտերի կատարումը, իրականացնում Կանոնադրությամբ, Բանկի կառավարման մարմինների սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված մասնաճյուղերի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

**9.7.** Մասնաճյուղի ղեկավարը նշանակվում (հաստատվում) է պաշտոնի և ազատվում է պաշտոնից Բանկի գլխավոր տնօրենի հրամանով: Բանկի մասնաճյուղի կառավարչի որակավորմանը ներկայացվող պահանջները կամ աշխատանքային գործառույթները, նրա վարձատրության պայմաններն ու չափը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը, պայմանագրի գործողության ժամկետներն ու այլ պայմանները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և (կամ) Բանկի ու մասնաճյուղի կառավարչի միջև կնքված աշխատանքային պայմանագրով:

**9.8.** Մասնաճյուղի ղեկավարը հանդիսանում է Բանկի ղեկավար պաշտոնատար անձ և իր լիազորությունները կարող է իրականացնել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված մասնագիտական որակավորման վկայականի առկայության և սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Բանկի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

**9.9.** Կանոնադրությամբ նախատեսված գործառնությունները իրականացնելու նպատակով Բանկը մասնաճյուղերին և ներկայացուցչություններին տրամադրում է գույք: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Բանկի հաշվեկշռում:

**9.10.** Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Բանկը:

**9.11.** Բանկը՝ ստանալով ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությունը, կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների գործունեությունը, բայց ոչ ավել քան մեկ տարի ժամանակով: Ընդ որում՝ տարածքային ստորաբաժանման գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ Կենտրոնական Բանկի խորհրդի որոշումն ստանալուց հետո Բանկը պարտավոր է տարածքային

ստորաբաժանման գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում:

**9.12**. Տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումն ստանալուց հետո Բանկը եռօրյա ժամկետում տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

**9.13.** Հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Բանկի ստեղծած կազմակերպությունը: Հիմնարկն իրավաբանական անձ չէ և գործում է Բանկի հաստատած կանոնադրության հիման վրա: Հիմնարկը, օրենքով սահմանված շրջանակներում, իր գործունեության նպատակներին, Բանկի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետում, օգտագործում ու տնօրինում է այդ գույքը: Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Բանկը:

## 10. ԲԱՆԿԻ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

**10.1.** Խոշոր են համարվում`

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 եւ ավելի տոկոսը:

Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

**10.2.** Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն:

Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու` հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

**10.3.** Սույն կանոնադրության 10.2. կետում սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից` դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի (մասնակիցների) ձայների 3/4-ով:

Սույն կետի պահանջները չպահպանելը օրենքի ուժով հանգեցնում է գործարքի անվավերության:

Սույն կետով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ` չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

**10.4.** Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք`

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

**10.5.** Սույն կանոնադրության 10.4. կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին`

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

**10.6.** Բանկի որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը` գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ`

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերած գույքի, ստացված ծառայության կամ Բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

**10.7.** Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ, եթե գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Գործարքի կնքումը, որում առկա է շահագրգռվածությունը, և որը բավարարում է սույն կետով սահմանված պահանջները, կարող է կնքվել առանց ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

ա) գործարքը Բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է.

բ) գործարքը Բանկի և մյուս կողմի միջև արդյունք է բնականոն տնտեսական գործունեության, որը կնքվել է մինչև սույն կանոնադրության դրույթներին համապատասխան շահագրգռվածության ճանաչումը (որոշում չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի գումարման օրը):

Եթե ընդհանուր ժողովի անցկացման օրվա դրությամբ անհնար է կանխատեսել Բանկի և գործարքի մյուս կողմի բնականոն տնտեսական գործունեության ընթացքում շահագրգռվածության հնարավորությունը, ապա սույն կետի պահանջները համարվում են կատարված, եթե ընդհանուր ժողովը որոշում կընդունի Բանկի և մյուս կողմի միջև պայմանագրային հարաբերությունների հաստատման մասին, որով կսահմանվի կնքվող գործարքների բնույթը և գործարքների առավելագույն արժեքը:

**10.8.** Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ Բանկի գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն կանոնադրության **10.1** և **10.2** կետերի դրույթները:

**10.9.** Գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը և կնքվել է սույն կանոնադրության **10.6** կետով սահմանված պահանջների խախտմամբ, չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր և չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

**10.10.** Շահագրգիռ ճանաչված անձը Բանկի առջև պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված վնասների չափով: Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ Բանկը կկրի վնասներ:

**10.11.** Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման վերաբերյալ սույն կանոնադրության և օրենքի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) կանոնադրական կապիտալում մասնակցությունը Բանկի կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

Սույն կետի պահանջները չպահպանելը օրենքի ուժով հանգեցնում է գործարքի անվավերության:

**10.12.** Գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ՝ Բանկի բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը) այն գինը, որով գույքի արժեքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ունեցող եւ այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել:

**10.13.** Գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

**10.14.** Գույքի շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Բանկը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է Բանկի բաժնետերերի՝ Բանկի կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության հետգնման դեպքերում:

Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

**10.15.** Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը Բանկի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:
Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով:

## 11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

**11.1.** Բանկն իր ինտերնետի տնային էջում, մշտապես պարտավոր է հրապարակել՝
ա) Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, Բանկը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել աուդիտային եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, իսկ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը:
Բանկը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում ինչպես նաև հրապարակել դրանք առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում).
բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, Բանկը տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակում է նաև մամուլում.
գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում.
դ)Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն՝ բաժնետոմս, նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.
ե) Բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Բանկի խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:
Սույն կետի «ա-ե» ենթակետերում նշված տեղեկություններից բացի, Կենտրոնական Բանկը կարող է պահանջել Բանկից ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական Բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:
Բանկը պարտավոր է հրապարակել սույն կետի «ա-ե» ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:
Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի տնային էջում, և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իր կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարներ, ժամկետայնություն և էական այլ պայմաններ:
**11.2.** Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝
ա) Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի կանոնադրության պատճենները.
բ) բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ Բանկի բաժնետոմսերի թողարկման ազդագրի պատճենը.
գ) Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.
դ)սույն կանոնադրության **11.1** կետում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:
Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման եւ (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:
Բանկն իր գլխամասային գրասենյակում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնում է հայտարարություն՝ սույն մասում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:
**11.3.** Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) Բանկի խորհրդի, գլխավոր տնօրենի, գործադիր մարմնի անդամների և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության **11.4** կետում նշված տեղեկությունները.

բ) Բանկի խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն՝ բաժնետոմս, նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

գ) Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի առաջին մասի «ա-գ», «թ», «ժ» և «ժա» կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաեւ Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները).

զ) Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, Բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, Բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, ընդհանուր ժողովի, խորհրդի, տնօրինության նիստերի արձանագրությունների, Կենտրոնական Բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, Կենտրոնական Բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական Բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից գլխավոր տնօրենին ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Սույն կետի համաձայն՝ Բանկի բաժնետիրոջ ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաեւ դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

**11.4.** Բանկի խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի, գործադիր մարմնի անդամների, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Բանկի բաժնետերերին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

ա) նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) մասնագիտությունը և կրթությունը.

գ) վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ) տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե) տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ)Բանկի բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին, գլխավոր տնօրենին, գործադիր մարմնի անդամներին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քանակը.

է)տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը) փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ.

**11.5.** Բանկն իրավունք չունի իր գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից Բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

**11.6.** Բանկի կողմից, սույն կանոնադրությամբ և օրենքների համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

**11.7.** Բանկի գործառնությունների հաշվետու ֆինանսական տարվա ժամանակաշրջանը հունվարի 1-ից մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ն է:

## 12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**12.1.** Բանկը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական եւ այլ հաշվետվություններ: Կենտրոնական բանկը կարող է սահմանել հաշվետվությունների ներկայացման նաեւ այլ պարբերականություն:

**12.2.**Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանք ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանում է Կենտրոնական բանկը՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները:

**12.3.** Բանկը Կենտրոնական բանկի սահմանած ձեւով, դեպքերում, կարգով և ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

ա) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

բ) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

գ) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հայտարարությունները այն մասին, որ նրանց մասնակցության միջոցով որևէ նոր անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերել: Եթե այլ անձ Բանկում ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցություն, ապա Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու նպատակով այդ անձի՝ բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական բանկ ներկայացնել Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը, ինչպես նաեւ այն իրավաբանական անձանց վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվություններ, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Սույն կետով սահմանված հաշվետվությունները և տեղեկությունները Բանկ ներկայացնելու պարտականությունը կրում են Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք:

**12.4.** Բանկը հաշվապահական հաշվառում վարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի և Կառավարության կողմից լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

**12.5.** Բանկը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով, հաճախականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում իր հեռանկարային զարգացման ծրագրերը:

## 13. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

**13.1.** Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 գլխով սահմանված կարգով:

**13.2.** Եթե լիցենզավորման ընթացքում կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման ժամանակ Կենտրոնական բանկ են ներկայացվում անարժանահավատ, կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ, ինչպես նաև եթե Բանկի կամ Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձի կողմից չեն իրականացվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի երրորդ մասի (Կանոնադրության 12.3 կետ) պահանջները, ինչպես նաև եթե Բանկի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ընթացքում ստացվում են այնպիսի հիմնավոր տեղեկություններ, ըստ որոնց՝ ի հայտ են եկել Բանկի հետ կապված անձանց (իսկ Բանկի հետ կապված իրավաբանական անձի դեպքում՝ նաև նրա մասնակցի) ֆինանսական վիճակի վատթարացման փաստեր, որոնք կարող են անդրադառնալ Բանկի ֆինանսական վիճակի վրա կամ այլ կերպ վտանգել Բանկի ավանդատուների կամ այլ պարտատերերի շահերը, ապա Կենտրոնական բանկն իրավունք ունի՝

ա) առաջարկելու Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձին, որպեսզի նա Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում օտարի Բանկում իր ունեցած ներդրումները կամ Բանկի նկատմամբ իր ունեցած այն պահանջի իրավունքը, որի ուժով նա կարող է ազդել Բանկի գործունեության վրա այն հիմնավորմամբ, որ դա սպառնում է Բանկի ֆինանսական վիճակին.

բ) Բանկի նկատմամբ կիրառելու «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի օրենքի 61 հոդվածով սահմանված պատժամիջոցներից մեկը:

Սույն կետի «ա» կետով նախատեսված Կենտրոնական բանկի առաջարկությունը չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի սահմանած ժամկետին հաջորդող օրվանից Բանկի կանոնադրական կապիտալում

նշանակալից մասնակցություն ունեցող անձը օրենքի ուժով չի օգտվում մասնակցության ուժով իրեն վերապահված ձայնի, շահութաբաժիններ ստանալու և առանց ընտրության խորհրդի կազմում ընդգրկվելու կամ դրանում իր ներկայացուցչին նշանակելու իրավունքից մինչև չվերանան սույն մասի «ա» կետով նախատեսված Կենտրոնական բանկի առաջարկության համար հիմք հանդիսացած փաստերը:

Եթե սույն կանոնադրության 12.3. կետի «գ» կետին համապատասխան՝ անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը չի ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը, ապա Բանկի այն նշանակալից մասնակցություն ունեցող անձը, որի միջոցով տվյալ անձը ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցություն, պարտավոր է Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում օտարել Բանկում իր մասնակցությունը:

## 14. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

**14.1.** Յուրաքանչյուր տարի բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

**14.2.** Բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

**14.3.** Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

**14.4.** Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

**14.5.** Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

**14.6.** Բանկում աուդիտ իրականացնելու ընթացքում արտաքին աուդիտի կողմից Բանկի ֆինանսական վիճակն իր կարծիքով էականորեն վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Կենտրոնական բանկին:

**14.7.**Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը:

**14.8.** Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջելու Բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

**14.9.** Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

**14.10.** Կենտրոնական բանկի պահանջով արտաքին աուդիտը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել Բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, անգամ եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմեն: Սույն կետով սահմանված պարտավորությունների չկատարման համար աուդիտորական կազմակերպությունը կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

## 15. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**15.1.** Բանկը կարող է վերակազմակերպվել Բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և Բանկի վերակազմավորման միջոցով: Բանկի վերակազմավորումը (կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

**15.2.** Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր՝ ստանալով Կենտրոնական բանկի նախնական հավանությունը: Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար Բանկը Կենտրոնական բանկի սահմանած ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները: Կենտրոնական բանկի խորհուրդը համապատասխան գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, կայացնում է սույն կետում նախատեսված նախնական հավանություն տալու կամ չտալու մասին որոշում: Սույն կետով սահմանված ժամկետում որևէ որոշում չկայացվելու դեպքում հավանություն տալու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը համարվում է ընդունված:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմնված հիմքերով և կարգով Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ միացման պայմանագրի կնքմանը:

**15.3.**Կենտրոնական բանկի նախնական հավանությունն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, միացող բանկերը միջնորդագրին կից Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանն են ներկայացնում միացման պայմանագիրը և Կենտրոնական բանկի սահմանած այլ փաստաթղթեր: Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում և գրանցում է միացման պայմանագիրն այն ստանալու պահից՝ երկշաբաթյա ժամկետում, եթե պայմանագիրը համապատասխանում է ստացված նախնական հավանության պայմաններին:

**15.4.** Միացման պայմանագրում սահմանված ժամկետներում միացման մասին որոշում ընդունած բանկերն իրականացնում են միացման պայմանագրով նախատեսված միջոցառումները, հաստատում են փոխանցման ակտը և պահպանվող բանկի կանոնադրության կամ կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ միասին «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով ներկայացնում են Կենտրոնական բանկ՝ գրանցման:

Պահպանվող բանկի կանոնադրությունը կամ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները Կենտրոնական բանկի կողմից գրանցելու պահից միացված բանկի գործունեության դադարման վերաբերյալ բանկերի գրանցման մատյանում կատարվում է գրառում: Սույն կետում նշված գրառման պահից պահպանվող Բանկը համարվում է վերակազմակերպված:

## 16. ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

**16.1**. Բանկը կարող է լուծարվել՝

ա) լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

գ) «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ.

ե) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

**16.2.** Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

**16.3.** Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում Բանկի լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը: Կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում է հայտը եռամսյա ժամկետում և իրավունք ունի մերժելու այն, եթե Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով լուծարումը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը: Այս դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երկարաձգել Բանկի գործունեությունը մինչև երկու տարի ժամկետով:

**16.4.** Կենտրոնական բանկի կողմից Բանկին լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Բանկը միջոցներ է ձեռնարկում ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ բանկի պարտավորությունների դադարեցման ուղղությամբ: Նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել:

**16.5.** Լուծարման մասին որոշման ընդունումից հետո Բանկն անմիջապես Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ դրան կցելով, Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած ցանկին համապատասխան լուծարումը հիմնավորող փաստաթղթեր:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել լուծարման թույլտվություն ստանալու հայտը, եթե առկա են ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորություններ կամ Բանկն ի վիճակի չէ բավարարելու իր պարտատերերի պահանջները:

**16.6.** Բանկի կողմից ներկայացված դիմումների մերժման հիմքերի բացակայությունն ստուգելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է լուծարման մասին որոշում կայացրած բանկում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնել ստուգում:

**16.7.**Կենտրոնական բանկը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև Բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:

**16.8.** Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 72-րդ հոդվածով սահմանված՝ դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով:

**16.9.** Բանկի լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

**16.10.** Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Բանկի գլխավոր տնօրենը կամ կառավարման նման լիազորություններ իրականացնող անձը:

**16.11.** Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Բանկի կառավարման լիազորությունները:

**16.12.** Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է Կենտրոնական բանկին բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

**16.13.** Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

**16.14.** Բանկի կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ձևավորելու մասին որոշման կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել Բանկի կնիքը, դրոշմակնիքները, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:

**16.15.** Լուծարային հանձնաժողով նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է պետական լիազորված մարմին՝ Բանկի ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող բանկ» բառերը:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո ողջամիտ ժամկետում փոխել լուծարվող բանկի կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «լուծարվող բանկ» բառերը:

**16.16.**Լուծարային հանձնաժողովը սույն կանոնադրության 16.12 կետով սահմանված՝ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում՝

ա) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ: Լուծարային հանձնաժողովը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին: Լուծարային հանձնաժողովի ծանուցումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը օրենքով նախատեսված կարգով պարտավոր են վերցնել Բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում Բանկ, ապա լուծարային հանձնաժողովը գույքը հանձնում է ի պահ՝ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր.

բ) հաշվեգրում և գնահատում է լուծարվող Բանկի ակտիվներն ու պասսիվները.

գ) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ Բանկի պարտատերերին հայտնաբերելու և բանկի դեբիտորական պարտքերն ստանալու, լուծարվող Բանկի կողմից տրված վարկերը ժամկետից շուտ վերադարձնելու ուղղությամբ.

դ) միջոցներ է ձեռնարկում լուծարվող Բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար.

ե) միջոցներ է ձեռնարկում լուծարվող Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ.

զ) որոշում է Բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները մասնակիցների միջև բաշխելու կարգը:

**16.17.** Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝

ա) լուծարվող Բանկի գույքի կազմի մասին.

բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Բանկի հաշվեկշռում արտացոլված կամ Բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը,

յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և սույն կանոնադրության **16.20** կետով սահմանված՝ պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.

գ) այդ պահանջների քննարկման արդյունքների մասին.

դ) Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

**16.18.** Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սույն կանոնադրության **16.17** կետով սահմանված կարգով միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի պարտադրելու լուծարային հանձնաժողովին միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող այլ մամուլում:

**16.19.** Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է սույն կանոնադրության **16.20** կետով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

**16.20.** Պահանջների բավարարման հերթականությունը.

1. Գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ:

2. Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին՝ լուծարային հանձնաժողովի անդամների կողմից սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը.

երկրորդ հերթին՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները: Մեկ

անձի՝ Բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ.

երրորդ հերթին՝ չորրորդ և հինգերորդ հերթերում չընդգրկված՝ բանկի այլ պարտավորությունները.

չորրորդ հերթին՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ.

հինգերորդ հերթին՝ բանկի բաժնետերերի պահանջները:

Սույն կետով սահմանված՝ Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության երկրորդ և երրորդ հերթերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում Բանկի բաժնետերերը և Բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են հինգերորդ հերթին:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

3. Լուծարային հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև Բանկի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկելու լուծարային հանձնաժողովի գործողությունները: Ընդ որում, եթե պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման այն հերթում, որով այդ պահին լուծարային հանձնաժողովն իրականացնում է պահանջների բավարարումը, ապա դատարանը կարող է կասեցնել լուծարային հանձնաժողովի կողմից տվյալ հերթով պահանջների բավարարումը՝ մինչև որոշման կայացումը:

Եթե պարտատերը պահանջ է ներկայացրել պարտատերերի պահանջների ներկայացման՝ սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա նրա պահանջը բավարարվում է լուծարային այն միջոցների հաշվին, որոնք կմնան պարտատերերի ժամանակին ներկայացված պահանջների բավարարումից հետո:

Եթե պահանջ ներկայացրած և լուծարային հանձնաժողովի կողմից հաշվառված պարտատերը մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար լուծարային հանձնաժողովի կողմից մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հայտարարված ժամկետի վերջին օրը չի ներկայանում իր պահանջն ստանալու համար, ապա նման պարտատիրոջը հատկացվելիք միջոցները կամ գույքն օրենքով սահմանված կարգով հանձնվում են նոտարի դեպոզիտ կամ տրամադրվում այլ բանկի՝ ի պահ:

Յուրաքանչյուր հերթի պահանջի բավարարումն սկսելուց առաջ լուծարային հանձնաժողովը մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով հայտնում է տվյալ հերթի պահանջների բավարարման վայրի, կարգի և ժամկետների մասին տեղեկատվություն: Պահանջների բավարարման վայրին, կարգին և ժամկետներին վերաբերող հիմնական տեղեկությունները, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրավաբանական ուժ են ստանում մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակվելու հաջորդ օրվանից:

Սույն կետի երկրորդ մասի երկրորդ հերթում ընդգրկված պահանջների բավարարման ժամկետը չի կարող 21 օրից պակաս լինել: Ընդ որում, պահանջների բավարարման սահմանված ժամկետը որևիցե հիմքով բաց թողնելու պատճառաբանությամբ ենթակա չէ վերականգնման:

4. Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են ներված:

**16.21.** Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ պարբերաբար, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել մամուլում:

Կենտրոնական բանկն իրավունք ունի լուծարային հանձնաժողովից պահանջելու ցանկացած տեղեկություն նրա գործունեության վերաբերյալ, ինչպես նաև լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ստուգում իրականացնել Բանկում:

**16.22.** Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը լուծարվող Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկը տասնօրյա ժամկետում կայացնում է լուծարման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը: Կենտրոնական բանկը մերժում է լուծարման հաշվեկշռի հաստատումը, եթե լուծարային հանձնաժողովը խախտել է օրենքի պահանջները:

**16.23.** Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարման հաշվեկշիռը Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ:

**16.24.** Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական բանկը լուծարվող բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո Բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած:

**16.25.** Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Բանկի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

**16.26.** Լուծարային հանձնաժողովի անդամները վարձատրություն են ստանում լուծարվող Բանկի միջոցների հաշվին:

**16.27.** Լուծարային հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:

**16.28.** Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է Բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի և (կամ) անդամների կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում նրանց որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչել: Այդ դեպքում Բանկի ընդհանուր ժողովը մեկշաբաթյա ժամկետում նշանակում է լուծարային հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ (անդամներ), հակառակ դեպքում լուծարային հանձնաժողովի նոր նախագահին կամ անդամին (անդամներին) նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

**16.29.** Լուծարային հանձնաժողովի գործողությունները կարող են բողոքարկվել դատարան՝ Բանկի պարտատերերի, պարտապանների, Կենտրոնական բանկի կողմից:

**16.30.** Պարտատերերի պահանջները բավարարվում են լուծարային միջոցների սեփականության իրավունքով Բանկին պատկանող գույքի (միջոցների) հաշվին:

## 17. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

**17.1.** Կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կարող է կատարել Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

**17.2.** Բանկի կանոնադրության փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին այդ փոփոխությունների մասին տեղեկացնելու պահից:

**17.3.**ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան փոփոխությունների կատարումը, Կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող օրենսդրությանը:

Համարակալված, կնքված և կարված է

32 (երեսուներկու) թերթ:

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ՝

________________ ________________

անուն, ազգանուն ստորագրություն

վերահսկող՝

________________ ________________

անուն, ազգանուն ստորագրություն